Պարույր Սևակ

Վառարանի առաջ

Իսկ քարածու՛խը...
Երբ նա վառվում է
Ձմեռվա ցրտին,
Հին վառարանում,
Եվ ձյունն է դրսում կրկնում ինքն իրեն,-
Լինում է այնպես,
Որ՝ մեկ էլ տեսար՝
Սոսափն եմ լսում ա՛յն անտառների,
Որոնք բյուրհազար տարիներ հետո
Այս քարածուխին պիտի վերածվեն.
Եվ գազանների ոռնոցն եմ լսում
Այդ անտառների անեզրության մեջ.
Եվ ձայնը նաև
Իմ նախա-նախա-նախապապերի,
Որ որս են անում այդ անտառներում,
Որ մերկանդամ են
Եվ ունեն դեռ պոչ,
Բայց անկարող են այլևս ապրել
Լռին խավարում կույր անձավների,
Ինչքան էլ դրանք թվան ապահով:
Ու հասկանում եմ,

Որ սերվել եմ ես
Դե՛ռ այն ժամանակ, հե՛նց այն ժամանակ...

15.XII.1959թ.
Երևան